

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Արտակ Մովսիսեան, Հնագոյն Պետութիւնը Հայաստանում՝ Արատտա, հր. «Գէպի Երկիր» մատենաշարի, Երեւան, 1992, 78 էջ. ամփոփումներ՝ հայերէնով (էջ 68-72), անգլերէնով (էջ 73-74) եւ ռուսերէնով (էջ 75-76): Արատտայի տեղադրական մէկ քարտէս (էջ 23):

Ո՛չ առաջինն է եւ գուցէ ոչ ալ վերջինը պիտի ըլլայ Արտակ Մովսիսեանը, որ պիտի գրադի Արատտայով եւ անոր տեղադրութեան հարցով: Իրմէ առաջ կար Մարտիրոս Ս. Գալուքեանը, որ հազիւ թէ փորձեց մօտենայ հարցին, իսկ անկէ առաջ եւ վերջ գտնուեցան հին պատմութեան հայ եւ օտար մասնագէտներ, որոնք մատչեցան Արատտային միայն այդքան՝ որքան որ անհրաժեշտ էր հին մշակոյթները, եւ մանաւանդ անոնցմէ սումերականը, հետագօտելու եւ ուսումնասիրելու իրենց ճիգին եւ աշխատանքին համար, եւ առ այդ՝ հարցը մնաց բաց, եւ երկար, շատ երկար սպասեց արդար լուծումի մը համար:

Սումերական սկզբնաղբիւրներու եւ պնակիտներու լոյսընծայումէն հտք անցան քանի մը տասնամեակներ, սակայն ո՛չ մեր մօտ եւ ոչ ալ այլ տեղ գիտութիւնը փորձեց ձեռք առնել գանոնք, իսկ երբ ըրաւ այդպէս՝ լոկ գրադեցաւ Գիլգամէշի դիւցազներգութեամբ, զոր նկատեց գրական առաջին գործը համաշխարհային գրականութեան<sup>1</sup>: Իսկ սումերական սա սկզբնաղբիւրներուն թարգմանիչն ու վերծանողը՝ Սեմուրլ Ն. Քրէյմըրը բաւարարուեցաւ յայտնելով թէ վայր մըն էր Արատտան ու կը գտնուէր Ուրմիոյ լիճի շրջանին մէջ<sup>2</sup>, մինչ սովետական եւ հայրենի ուրարտագէտներն ու մտաւորականութիւնն ալ լուրջի շառին Գալուքեանը՝ երբ յայտարարեց անիկա, թէ «անհաւանական չէ, որ այս Aratta-ն գտնուած լինի Ուրուատրի-Արարատ լեռներում»<sup>3</sup>:

Իրաւ ալ՝ սովետական պատմագիտութեան մէջ ծանրօրէն հաստատուած եւ ամբողջ կեանքի մը եւ կեանքերու վարկն ու համբաւը վաստկած ուրարտագիտութիւնն այդքա՛ն էր բիրտ ու այլամերժ, որ ո՛չ մէկ ատեն կարելի էր դուռ մը բանալ նորութեան եւ հրապարակ դնել հինէն եւ ընդունուածէն տարբեր, եւ նախագրծուածէն եւ վաւերացուածէն դուրս սրեւէ նորութիւն, սրեւէ նոր վարկած եւ տեսութիւն: Հակայեղափոխական էր կատարուելիքը:

Այսինքն՝ հաստատուածը որ ա՛լ դադրեր էր լեղափոխական ըլլալէ՝ կարելի չէր փոխել իսկ Գափուքճեանը կը փորձէր ընել այդպէս, մանաւանդ որ՝ մասնագէտը չէ՛ր իր կատարած ուսումնասիրութիւններուն: Ի վերջոյ՝ ճարտարապէ՛տ մըն էր միայն, ի՞նչ փոյթ որ «վաստակաւոր» մը ըլլար իր մասնագիտութեան մէջ, գիտնար կարդալ ու վերծանել հին սեպագիրները, տիրացած ըլլար ողջ ու մեռած տասնեակ մը լեզուներու, եւ ըլլար գիտակ՝ պատմութեանն ու նախապատմութեանը հին ու նոր ժողովուրդներու եւ անոնց մշակոյթներուն:

Ապա տակաւին՝ կային ոմանց մօտ դեղեւում մը եւ տեսակ մը վախ՝ դէմ կենալու համար ընկալեալին եւ ընդունուածին, ու մանաւանդ՝ որոշ զգուշացումներէն մը վերէն եկող եւ պարտադիր կերպով պաշտօնական եզրակացութեան մը դէմ ճակատ պարզելու ուղղութեամբ: Եւ Գափուքճեանը մնաց հոն՝ ուր որ էր, առանձին՝ իր գարտուղութեան մէջ եւ մինակ՝ իր ըմբօստութեամբ, ի՞նչ փոյթ որ 1973-ին Պէլլութի մէջ հրատարակեր էր իր Արմէն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրարտուն Ժառայուն գործը<sup>4</sup>, 1982-ին Մոնթրէալի մէջ՝ Հայ Ժողովրդի Ծագումը հատորը, եւ ապա՝ 1988-ին ալ՝ Պէլլութի մէջ Արմենիա, Սուբարտու եւ Սուներ-Հնդեւրպական Հայրենիքը եւ Հին Միջագետքը ուսումնասիրութիւնը:

Անհրաժեշտ էր սակայն, որ հրապարակ գար Արատտան եւ գտնէր իր արդար տեղը: Ուրարտագիտութեան մէջ քիչեր կային, որոնք ըլլային հետաքրքրուած՝ սումերական գիրով ու գրականութեամբ, եւ հոն գտնէին մէկէ աւելի անգամներ լիշատակումը Արատտային, որ եթէ չէր յստականար իր տեղադրութեամբ՝ պարզօրէն անոր համար էր որ ամբողջական չէին սումերական սեպագիր պնակիտները, եւ առ այդ՝ կարող չէին յստակ մէկ պատկերացումը տալ տեղի ու վայրի, եւ ապա՝ կատարուած լիշատակումները յաճախ հպանցիկ էին եւ քովնախ, եւ առ այդ՝ ուղղակի աղերս մը կարելի չէր գտնել անոնց բովանդակութեան եւ Արատտայի տեղադրութեան միջեւ: Այսուհանդերձ՝ եղածն իսկ բաւարար էր իր կցկտուր վիճակով, եւ առկայ հատուածներու, քովնախ նշումներու, եւ հարեւանցի ակնարկներու միացումով կարելի կը դառնար հեռագգալ այն կալքը ուր անհրաժեշտ էր գետեղել Արատտան:

Այս մէկը կատարեց Արտակ Մովսիսեանը, որ մեր մօտ առաջին անգամն ըլլալով էր որ խորամուխ եղաւ ուսումնասիրութեանը սումերական գիւցագներգութիւններուն մեծ ու փոքր, ամբողջական կամ ոչ-լրիւ կերպով արձանագրուած պնակիտներու

բեկորներուն, անոնցմէ զատեց ու հաւաքեց այն բոլորը որոնք կ'առընչուէին Արատտային եւ անոնց ցուցմունքներով լառաջացաւ գտնելու համար այն հողաշերտը որ հինգ հազարամեակ մը առաջ ծանօթ էր Արատտա անունով:

Այսօր, երբ նոյնիսկ իր նախնական ձեւին մէջ կատարուած է աշխատանքը, դիւրին է պատմութեան հալ ուսանողին համար եզրակացնել, թէ Արատտան Ուրարտուն էր արդէն, իսկ Ուրարտուն՝ Արարատն էր միայն, եւ ուրեմն՝ Արատտան Արարատն էր լոկ, եւ առ այդ՝ հին Արատտան Արարատեան թագաւորութիւնն էր միայն ըստ սուսմերներուն<sup>5</sup>: Սակայն պէտք չէ մտահան ընել, որ պիտի գտնուէին ոմանք, որոնք եղան լամառութեամբ մը կառչած, ըստ իրենց, իրարմէ տարբեր եւ անկախ՝ առկայութեանը Ուրարտուն, Արարատին եւ Արատտային, մերժեցին ամէն ինչ, մանաւանդ որ կային կարգ մը տուեալներ, որոնք կրնային այլ ուղղութեամբ առաջնորդել գիտական մտածողութիւնը բանասէրին<sup>6</sup> եւ ստիպել զայն հաստատելու թէ նախ ուրիշ էր Արատտան, եւ ապա՝ նոյնը չէին Ուրարտուն եւ Արարատը, եւ հուսկ ուրեմն՝ այլ բան էր Հալաստանը: Մարդ միամիտ ըլլալու է ընդունելու համար որ դարերով իշխանութիւն վարող ժողովուրդ մը եւ երկիր մը կրնան չքանալ մէկ օրէն, անցնիլ պատմութեան, մոռցուիլ լեղակարծ կերպով, եւ անոնց փոխան կրնան հրապարակ դալ ա՛յլ ժողովուրդ մը եւ ուրիշ երկիր մը, որոնք հիմնովին տարբեր են նախկիններէն լեզուական, մշակութային, կրօնական եւ նոյնիսկ ֆիզիքական տրեւայներով:

Իսկ Արատտա՞ն:

Կա՞ր անիկա եւ ունէ՞ր գոյութիւն ժամանակին մէջ եւ վայրի մը տարածքին վրայ: Կարելի՞ էր ընդունիլ, թէ անիկա նոյնն էր՝ ինչ որ էին Նայիրին, Ուրարտուն, Արարատն ու Արմինիան: Այսօր ամէն տուեալ կալ ընդունելու համար որ նոյն էին անոնք երկէկ եւ անուանումը՝ նոյն հողամասին, եւ նոյն ժողովուրդն էին արատտացին, ուրարտացին, արարատացին, արմէնը, հայը եւ նայիրիցին:

Եթէ որոշած ենք յստակացնել հայուն եւ անոր երկրին պատմական անցեալը եւ միանգամ ընդմիջտ ազատիլ խճճումէ, բարդութենէ, եւ մերթ ծիծաղելիին եւ հեզնականին հասնող սոփեստութենէ՝ նախ ընդունելու ենք նոյն անուանումին ու տեղանունին հնչունային տարբեր կարելիութիւնները այլազան ժողովուրդներու մօտ եւ զանազան ժամանակներու մէջ: Այլապէս՝ իւրաքանչիւր տարբերութեցում հին արձանագրութեան կամ սեպագիր հատուածի՝ իրեն հետ պիտի բերէ առկայութիւնը նոյն ժողովուրդէն եւ նոյն

Հողամասէն ստեղծուած այլ ժողովուրդի եւ երկրի, եւ առ այդ՝ լա-  
ուաջացնէ հսկայ փաղանդը նորանոր մասնագէտներու, որոնք զօ-  
րաւոր կերպով կառչելով ճշմարտութեան լո՛կ իրենց կողմին՝ պի-  
տի մերժեն մնացեալ ամէն ինչ եւ ոգի ի բռին աշխատին ցոյց  
տալ բան մը որ չկայ եւ որուն միա՛կ ճշմարտութիւն ըլլալու  
փաստը պիտի գտնեն միմիայն իրե՛նք իրենց մէջ եւ իրենց սան-  
ձարձակութեան:

Մովսիսեանի փոքրածաւալ սա Արատտան, սակայն, կու գայ  
միանգամ ընդմիջա՛ փակելու ամէն ճամբայ խելակորոյս շարժումի  
եւ փակուղիի մը առջեւ դնելու այն բոլո՛րը, որոնք ուրարտագէտ  
են լամառօրէն եւ պնդելով կը պնդեն ու կը մերժեն ճանչնալ եւ  
ընգունիլ գոյութիւնը Ուրարտուէն եւ ուրարտացիէն դուրս որեւէ  
այլ երկիրի եւ ժողովուրդի:

Փոքր, իրապէս շա՛տ փոքր գիրք մըն է Արատտան եւ ունի  
լոկ 67 էջ, որոնցմով Մովսիսեանը խիտ ու ամփոփ կերպով քննել  
կը փորձէ տեղադրութիւնը Արատտա երկիրին՝ օգտագործելով  
տուեալները սումերական լոկ քանի մը վիպերգի: Այսպէս՝ սումե-  
րական դիւցազնավէպէն, որ գրական առաջին տեղծագործութիւ-  
նը կը նկատուի աշխարհի մշակոյթին մէջ՝ հրապարակ կը քաշ-  
ուին անոր «էնմերքարը եւ Արատտայի գերագոյն քուրմը»<sup>7</sup>, «էն-  
մերքարը եւ Էնսուքուշսիրաննան» կամ «էնմերքարը եւ Էնսուխ-  
քեշտաննան»<sup>8</sup>, «Լուկարպանտան եւ Խոռու մ լեռը» կամ «Լուկալ-  
պանտան լեռներու խաւարին մէջ»<sup>9</sup>, «Լուկարպանտան եւ Էնմերքա-  
րը» կամ՝ պարզօրէն «Լուկարպանտա»<sup>10</sup> եւ «Կիլկամեշը եւ անմահ-  
ներու երկիրը»<sup>11</sup> հատուածները ամբողջական կամ հատուածային  
ձեւով, կ'ենթարկուին լուրջ եւ մանրամասնեալ ուսումնասիրու-  
թեան եւ վերլուծումի՝ հասնելու համար աներկբայելի եզրակա-  
ցութեան մը, ըստ որուն, Մովսիսեանի իսկ բառերով, «Ք. ա. 3-րդ  
հազարամեակում հնագիտական նիւթը նոյնութիւն է ցուցաբերում  
ողջ Հայկական Լեռնաշխարհի եւ որոշ յարակից շրջանների տա-  
րածքում: Այդ ժամանակաշրջանի հնավայրերի թիւը լեռնաշխար-  
հում 300-ից աւելի է, եւ նրանց բարձր զարգացման հասած մշա-  
կոյթն իր արժանիքներով համեմատելի է Միջագետքի եւ Եգիպ-  
տոսի հնագոյն մշակոյթների հետ: Այդ մշակոյթի հետքերը հիւսի-  
սում հասնում են մինչեւ Կուբան եւ Չեչենա-ինգուշեթիա, իսկ  
հարաւում՝ Սիրիա եւ Պաղեստին: Լեռնաշխարհում պաշտամուն-  
քային ու կենցաղային իրերի, աշխատանքային գործիքների ու  
ճարտարապետական կառուցյաների միակերպութիւնը վկայում են  
նրանում ինքնուրոյն ու միասնական մշակոյթի եւ այդ մշակոյթի

կրողներին ազգակցութեան մասին, որը գալիս է դեռևս Ք. ա. 6-5-րդ հազարամեակներից:

«Կարելի է ենթադրել, որ շումերական աղբիւրների "Արատտա" անունը տրուել է հնագիտական նիւթի հիման վրայ լատակ տեղորոշուող եւ աշխարհագրական ամբողջութիւն կազմող Հայկական Լեռնաշխարհի Ք. ա. 3-րդ հազարամեակի մշակութային գօտուն: Թօգուտ այս ենթադրութեան է խօսում այն փաստը, որ միջագետքեան սկզբնաղբիւրներում Հայկական Լեռնաշխարհը, սովորաբար, հանդէս է գալիս մէկ հաւաքական անուամբ՝ վերին Երկիր, Նայիրի, Ուրարտու»<sup>12</sup>:

Ինչ որ ալ եղած ըլլայ եզրակացութիւնը Մովսիսեանին՝ հոն հասնելու համար անիկա բեմ բարձրացուց մէկ պատկերը հայտնաբերական յարաբերութիւններուն<sup>13</sup>, այնպէս՝ ինչպէս որ կը տրուէր անիկա սումերական վիպերգերուն մէջ, եւ որուն միջոցով կարելի կ'ընծայուէր վերբերումը այն տուեալներուն՝ որոնք պիտի գալին լոյս ափուելու տեղադրութեանը վրան Արատտա երկիրին: Այս ձեւով էր որ ի յայտ եկաւ, որ մահը կեանքով կոխած եւ անմահութեան տիրացած, այսինքն՝ ջրհեղեղեան մահացումէն ետք կեանքին իրաւունքն ստացած ժողովուրդի մը բարձրագոյն ու լեռնապատ երկիրն էր Արատտան, ուր սումերական հայրենիքէն կարելի էր հասնիլ գետի ճամբով՝ կտրելով եւ անցնելով խուրրիներու երկիրը, որուն բնակիչները, ըստ Գավուքեանի, «Հայկական լեռնաշխարհի բնակիչներն էին» արդէն<sup>14</sup>: Բարձրագոյն լեռներու աշխարհն էր Արատտան, ուր կային բարտիի անտառներ, եւ գոր նուաճել փորձեցին վարի՝ հարաւի ժողովուրդները, սակայն կարողացան հասնիլ որոշ տեղ մը միայն ու վերադարձան տուն:

Արատտայի տեղադրութեան հարցը կը ներկայացուէր սումերներուն իսկ հասկացողութեամբ, ըստ որուն, ինչպէս կը մէջբերէ Մովսիսեանը՝ Արատտայի լեռներն ու շրջանները «վերելում հասնում են երկնային ձուլուածքին, (եւ) ներքեւում նրանց կուրծքը սանդարամետին է հասնում»<sup>15</sup>: Բարձրագագաթ լեռներու այս երկիրն էր, գոր, ըստ սումերական դիւցազնավէպին, լաղթահարելու, նուաճելու եւ այդ ձեւով անմահութեան տիրանալու համար մեկնեցան Կիլկամեշն ու իրեն նման այլ հերոսներ, սակայն «հերոսները չեն հասնում անմահների երկիր», այլ բաւարարում են նրա ճանապարհին մայրիների լեռների տիրակալ Խուվաւային՝ Խուուումի որդուն պարտութեան մատնելով»<sup>16</sup>: Սա մէկն արդէն իսկ ցոյց կու տայ, որ անլաղթահարելի երկիր էր Արատտան, որուն լստագային պիտի փորձէին հասնիլ ասորական, բարեխական եւ աք-

բատական հորդաները եւ ձախողէին:

Ըստ Մովսիսեանի եզրակացութեան՝ «Արատտա անունը չի բացատրոււմ շումերերէն եւ, ամենայն հաւանականութեամբ, այդ երկրի բնակիչների իրենց երկրին տուած անունն է. հաւանաբար այն պէտք մեկնաբանել հնդեւրոպական հիմքի վրայ»<sup>17</sup>: Ահա թէ ինչո՞ւ համար անիկա կը հակի ընդունելու Հրաչեայ Մարտիրոսեանի այն կարծիքը թէ «Արատտան ե՛ւ արատտացիների, ե՛ւ շումերների կողմից անուանոււմ է սուրբ ծէսերի/օրէնքների երկիր»: Հետեւաբար կարծու՞մ եմ, որ Արատտա տեղանունը ծագում է հընդեւրոպական \*arṭo- արմատից, հմմտ. հին հնդկ. rta՝-«սուրբ օրէնք, կարգ», աւեստ. arōta-«օրէնք, սուրբ հաւատք», լուււ. arδov-«Արդար, բարեպաշտ», հայ.-արդ.-ար-«արդար, ուղիղ, ճշմարիտ, շիտակ»<sup>18</sup>:

«Եթէ այս մեկնաբանութիւնը ճիշդ է, ապա Հայկական Լեոնաշխարհի հարաւում Ք. ա. 3-րդ հազարամեակում առկայ է հընդեւրոպական որեւէ լեզուով կամ աւելի ճիշդ՝ բարբառախմբով (հնդարիական կամ հնդիրանական կամ հայ-լուսնա-արիական) ներկայացող էթնիկ տարր:

«Անհնարին չէ նաեւ նոյն արմատից բխեցնել վանի թագաւորութեան պաշտամունքային գլխաւոր կենտրոն Ardini-ի անունը»<sup>19</sup>:

Անգամ մը որ Մովսիսեան ընդունեցաւ Մարտիրոսեանին վարկածը, իսկ ոչ մէկ պատճառ կար գայն մերժելու համար՝ ա՛յ դիւրացաւ Արատտա նախանունէն անցքը դէպի Արաթու, Ուրարաթա, Ուրարաթու, Ուրարտու, Ուրուատրի, եւ Արարատ ձեւերը, ու եզրակացուց թէ «Արատտա, Ուրարտու, Արարադ/տ եւ Կարդու տեղանուններն իրենց տարբերակներով տրուել են միեւնոյն երկրամասին, այն է՝ Հայաստան Լեոնաշխարհին: Այդ երկրանունները հիմքում ունեն հնդեւրոպական միեւնոյն արմատը եւ նշանակել են «Սուրբ օրէնքների երկիր»»<sup>20</sup>:

Այս եզրահանգումէն ետք էր որ Մովսիսեան փորձեց գտնել յարանմանութիւններն ու հանգիստութիւնները հայկական եւ սումերական դիցաբանութիւններուն եւ կատարեց մանրամասն մէկ բաղդատականը մէկ կողմէն սումերական Տումուզի եւ Ինաննա եւ միւս կողմէն հայկական Արա եւ Ծամիրամ ու Հայկ եւ Բէլ պատումներուն: Նոյնը կատարեց պաշտամունքային ծէսերուն, կրօնական հաւատալիքներուն եւ սովորութիւններուն պարագային ալ, ու գտաւ որ անոնք տակաւին կը տեւէին աշօրուան հայուն մէջ: Ապա ներկայացուց պետական կառուցը, որուն մէջ հիմնական դեր

կը խաղար քրմական դասն իր իրաւունքներով եւ իրաւասութիւններով, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս որ էր գրութիւնը Սուճերական Աշխարհէն ներս, եւ հարց տուաւ, առանց պատասխան մը գտնել կարենալու, թէ ինչո՞ւ սուճերական պետութիւնը մէկէ աւելի անգամներ փորձեց իրեն ենթարկել Արատտան, եւ եզրակացուց միայն, թէ «այս հարցը, սակայն, կարօտ է լետագայ ուսումնասիրութեան»<sup>21</sup>,

Ըստ սուճերական սկզբնաղբիւրներուն՝ Արատտայի տնտեսական կեանքը, անոր առեւտուրը, արհեստները եւ ճարտարարուեստը հիմնուած կը մնային երկրագործութեան, հողի ոռոգումի, գուցէ պտղամշակութեան, թանկարժէք քարերու արտահանումին, մետաղներու մշակումին եւ ձիաբուծութեան վրայ: Սուճերական դիւցազնավէպերուն մէջ կը լիշուէին ոսկին, արծաթը, անադապը-դինձը եւ կապարը՝ մետաղներէն, լազուրն ու սարտիոնը՝ թանկագին քարերէն, ձին՝ կենդանիներէն, եւ տախտակն ու ատաղձը՝ անտառամշակութենէն: Այս բոլորին առկայութիւնն արդէն իսկ կ'ենթադրէր քաղաքակրթական որոշ յառաջացեալ մակարդակ մը, որուն տէրն էր Արատտան, որ անհրաժեշտ կերպով կարիքը պիտի ունենար գիրին ու գրելաձեւին՝ եթէ պիտի շարունակէր տեւել որպէս պետական, ընկերային եւ տնտեսական կառուց: Քննութեան ենթարկելի ետք սուճերական տուեալներն այս ուղութեամբ՝ Մովսիսեան ինքնավստահ կերպով գրեց թէ «... Արատտայի քուրմը գրել է պատկերագիրերով»<sup>22</sup>: Նշանակում է՝ Ք. ա. 3-րդ հազարամեակի 1-ին կէսին Արատտայում գրի գործածութիւնն անձանօթ երեւոյթ չէր. պետութեան գոյութիւնը հաստատում է գրի գործածութեան փաստով»<sup>23</sup>, աւելին՝ «չուճերական դիւցազնավէպի վկայութիւնը եւ նոյն ժամանակաշրջանում Հայկական Լեռնաշխարհում պատկերագրի գործածութեան փաստը կասկած չեն թողնում, որ Արատտա երկիրն ունեցել է սեփական գիր»<sup>24</sup>: Յստակ էր եզրակացութիւնը Մովսիսեանին՝ առանց սակայն նշել կարենալու թէ օգտագործուող պատկերագրային համակարգն ի՞նչ աւրնչութիւններ ունէր սուճերականին եւ շրջակայ այլ ժողովուրդներու ունեցածներուն հետ:

Այս բոլորէն ետք՝ ա՛յլ ինքնավստահ էր Մովսիսեանն իր դիրքին վրայ--նոյնն էին Արատտան եւ Ռւրարտու/Արարատը, եւ որպէս երկրանուն՝ կը տրուէին միեւնոյն հողամասին, որ արեւելքէն՝ կասպից Ծովու սահմաններէն կը տարածուէր մինչեւ Տաւրոսեան լեռները արեւմուտքի մէջ, եւ հիւսիսի մէջ՝ Սեւ Ծովու Պոնտական շրջաններէն մինչեւ դէպի արեւելք երկարող թեւը Տաւրոսեան լեռ-

ներուն՝ հարաւի մէջ, հոն կը մատչէր միջազեական հիւսիսային լեռնաշրջաններուն եւ կը կենար կորդուքի հիւսիսային լեռնալանջերուն վրայ առ ալժմ անձանօթ տեղ մը:

Ըսինք՝ թէ Մովսիսեանը ո՛չ առաջինն էր եւ ոչ ալ պիտի ըլլար վերջինը Արատայի հարցով զբաղողներուն: Անշո՛ւշտ որ պիտի գան ուրիշներ, որոնք պիտի փորձեն իջնել խորերը պատմութեան՝ անկէ լոյս աշխարհ հանելու համար անցեալի անչիշատակ ժամանակներէն ի վեր սքող մնացած ճշմարտութիւններ Հայաստանի մասին եւ հայութեան, եւ ժամանակի ընթացքին պիտի պարզեն ու պարզաբանեն առ ալժմ անլուծելի մնացած որոշ հարցեր, հին աշխարհի որոշ առընչութիւններ, հայ լեզուի եւ ժողովուրդի կազմութեան, հայ հաւատքի ու քրմութեան, հայ արհեստի եւ գիրի ու գրականութեան հետ ազերս ունեցող հիմնական հարցեր, որոնց Մովսիսեանը հազիւ թէ մատչեցաւ: Գուցէ ուզէր իսկ՝ պիտի չկարենար կատարել շատ բան, որովհետեւ՝ հակառակ որ հայկական պատկերագրութեան ուսումնասիրութիւնը քսան տարիներու վաստակ մը ունի իր ետին՝ տակաւին կը գտնուի առաջին իր քալներուն վրայ: Թերեւս ա՛յս իսկ պիտի ըլլայ հիմնական պատճառներէն մէկը, որ Հայկական Աշխարհի գիտական մարդիկ օր մը յայտարարեն ի լուր աշխարհի, թէ ինչպէս որ թուրքեր են ուրարտացիները եւ նախահայրերը թուրքին, եւ ինչպէս որ նոյնպիսին են հիթիթները, էլամները, լուվէնները, փիւնիկեցիները, խուրրիները, միտանիները, եգիպտացիները, յոյներու բաղկացուցիչ տարրերը, լատինները, ֆրանքները, անկլոսաքսոնները, հնդիկները, չինացիները, եւ մնացեալ բոլոր ժողովուրդները բոլոր ժամանակներուն՝ նոյնպէս են նաեւ արատացիները: Պիտի յայտարարեն, եւ գուցէ պիտի գտնուի ո՛չ մէկը, որ արգելք հանդիսանայ անոնց<sup>25</sup>:

Մովսիսեան, Մարտիրոսեան, Գալուքեան եւ անոնց նմանները լաւագոյն պատասխանն են բոլոր անոնց՝ որոնք կը նկրտին իրենք իրենցմէ ստեղծել պատմութեան մէջ գոյութեան չկոչուած մեծութիւններ: Իսկ այսօր թուրքն անոնցմէ՛ է միայն:

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տասնամեակներու ընթացքին քանի մը անգամ մերն եղաւ առիթը Հայկազեան Համալսարանական Գոլէճէն (այդ օրերուն՝ տակաին լոկ Հայկազեան Գոլէճ) ներս ձեռք առնելու Սումերական Գրականութենէն միայն կիկամեշը, որպէս անբաժան մէկ մասը թիւ գիրին ու գրականութեան, եւ մշակոյթին ու քաղաքակրթութեան՝ առանց խորանալու անոր գեղարուեստական, կրօնական, մշակութային եւ ընկերային հարցերէն դուրս ալ քանի մը մէջ, մինչդեռ անհրաժեշտ էր անոր միջոցով արտահանել նաեւ պատմական կարգ մը անլոյծ մնացած հարցեր: Իրականութեան մէջ՝ Մովսիսեանն ա՛յս է որ կը կատարէ իր հատորիկով՝ ընդհանուր գիծերու մէջ:
2. Samuel N. Kramer, *The Sumerians*, Chicago, 1963, p. 275.
3. Մարտիրոս Ա. Գալուքեան, *Հայ Ժողովրդի Ծագումը*, Մոնթրէալ, 1982, էջ 29:
4. Հակառակ իր խորապէս գիտականութեան եւ ուսմվիրայ գործ մը ըլլալուն, Պէշրոթի մէջ այս հատորը լոյսին բերողներուն անգիտութեան իսկ պատճառով, անոր կը պակսին ցանկերը անձնանուններու, տեղանուններու եւ յատուկ անուններու, իրականութիւն մը որ կը դժուարացնէ հատորին օգտագործումը հայուն նախապատմական շրջանը եւ անոր աւրընչող հարցերն ուսումնասիրողերու համար:
5. Այս մասին տես՝ Արտակ Մովսիսեան, *Հնագոյն Պետութիւնը Հայաստանում՝ Արատտա*, Երեւան, 1992, էջ 29-32:
6. Տես՝ նոյն, էջ 18-22:
7. S. N. Kramer, *Enmerkar and the Lord of Aratta*, Philadelphia, 1952.
8. S. N. Kramer, *From the Tablets of Sumer*, Indian Hills, 1956, pp. 232-234. ասկէ ետք կը նշուի որպէս *Tablets*: Տես նաեւ՝ S. N. Kramer, *History Begins at Sumer*, New York, 1959, pp. 204-207. ասկէ ետք կը նշուի որպէս *History*:
9. *Tablets*, pp. 237-238, եւ *History*, pp. 209-211:
10. *Tablets*, pp. 235-237, եւ *History*, pp. 207-209:
11. S. N. Kramer, "Gilgamesh and the Land of the Living," *Journal of Cuneiform Studies*, No I, 1947, pp.1-47.
12. Մովսիսեան, էջ 72:
13. Հայ-սումերական փոխյարաբերութիւններու մէկ ներկայացումին համար տես՝ Մարտիրոս Ա. Գալուքեան, *Արմէն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրարտուն*, Պէշրոթ, 1973, էջ 43-90:
14. Նոյն, էջ 307: Խորրիներու մասին ընդհանրապէս տես՝ նոյնը, էջ 298-321. տես նաեւ՝ Dr. G. Contenau, *La Civilization des hitites et des hurrites de Mitani*, Paris, 1948:
15. Հ. Ա. Էդոյեան [յսբ.], *Հին Արեւելքի Պոեզիան*, Երեւան, 1982, էջ 143:
16. Մովսիսեան, էջ 24:

17. Նոյն, էջ 30:
18. Հայերէնի մէջ արմատ արդ--բառի մասին տես, Հ. Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան*, հտ. Ա., Երեւան, 1971, էջ 307-308:
19. Մովսիսեան, էջ 30-31:
20. Նոյն, էջ 32:
21. Նոյն, էջ 56:
22. Հայկական Լեոնաշխարհի զանազան շրջաններուն մէջ գտնուող սբառերագիրներուն նոյնիմաց համապարփակ եւ առաջին գործը կը մնայ Մարտիրոսեանին հրատարակած հատորը, որուն համար տես՝ Յարութիւն Ա. Մարտիրոսեան, *Հայաստանի Նախնադարեան Նշանագրերը*, Երեւան, 1972: Այս գործի աւարտին է որ հեղինակը կ'եզրակացնէ, թէ "ժայռաբառերէնի ուսումնասիրութիւնը դեռ նոր է ծաւալում Հայաստանում: Կարելի է լիալոյս լինել, որ այն շատ ու շատ նորոյթներ կը բերի իր հետ": Տես՝ նոյն, էջ 70:
23. Մովսիսեան, էջ 61:
24. Նոյն, էջ 62:
25. Այս մասին տես՝ *Türk Tarihinin Ana Hatları*, İstanbul, 1930, s. 2-3; Prof. Dr. Afet Inan, *Türk Tarihi Hakkında Mütalaalar*, İstanbul, 1930. Ulag İgdemir, *Cumhuriyetin 50 .Yilinda Türk Tarih Kurumu*, Ankara, 1973, s. 5, եւ İsmail Besikei, "Türk-Tarih Tezi" ve Kürt Sorunu, Ankara, 1977, s. 11-12:

է. Վ.